№ 96 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 19

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՍԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 19 № 96

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վեհափառ Կաթողիկոսի անունով Նախիջևանի կոտորածների մասին ստացված պաշտօնական հեռագիրները. Օրվայ պահանջը Աբարանում. Հասունացած հարց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Նախիջևանի գաւառից դեռ շարունակում են ստացվել հեռագիրներ, որոնք նկարագրում են գաւառի հեռաւոր անկիւնները. վառնգված տեղը պէտք է համարել Գողթանի մասը։ Փառակա, Գեազ, Մորգիւն գիւղերը ենթարկվել են կողոպուտի։ Իսկ Ագուլիսը, Ցղնան թէև չեն ջնջված, բայց երկիւղի մէջ են։ Այնտեղից ստացվել են մի շարք հեռագիրներ, որոնցով տեղական ազգաբնակութիւնը խնդրում է հրաւիրել կառավարութեան յատուկ ուշադրութիւն գաւառի այդ մասի գիւղերի դրութեան վրա։

—

Թիֆլիսի քաղաքագլուխը ստացել է Նախիջևանից հետևեալ հեռագիրը.

Երէկ խաղաղ պրօցեսսիայի գնացքի ժամանակ, որի գլխին գտնվում էին Կարապետ վարդապետը, շէյխ-ուլ-իսլամը, փոխ-նահանգապետը քաղաքացիների մի աննշան բազմութեան հետ, սպանված Աղամեանի տան առաջ դուրս եկաւ Նրա այրին և բռնելով քաղաքային աւագի փեշը ասաց՝ «Եթէ իմ ամուսինը խաբված չը լինէր և բացած չը լինէր խանութը, նա սպանված չէր լինի»։

—

Թիֆլիսի քաղաքագլուխը հեռագրել է Նախիջևանի Թոմա վարդապետին հետևեալը.

Ձեր և Մելիքեանցի հեռագիրները հաղորդեցի Փոխարքայի օգնական Սուլթան Կրիմ-Գիրէյին։ Նա հանգստացրեց հաւատիացնելով, որ ուղարկված են նշանաւոր ոյժեր և ձեռք են առնված եռանդուն միջոցներ դադարեցնելու անմիտ թշնամութիւնը։ Դուման նշանակել է 5000 բուբլի և խնդրատուոյց է լինելու, որ թոյլ տրվի բանալ ժողովարարութիւն առանց ազգութեան խորութեան։

—

Մի մասնաւոր նամակից իմանում ենք հետևեալը.

«Մօտ 70—80 հոգի զինված հայ կլուրիճներ, տեսնելով որ կառավարութեան զօրքերն անբաւական են Թուրքական յարձակումները զսպելու, դուրս են գալիս հայ գիւղերը պաշտպանելու։ Խումբը, լսելով, որ Թուրքերը տարել են Հազարափրկչի մասունքը և արդէն շրջապատել են Կարմիր վանքը, վրա է հասնում վանքին և շրջակայ գիւղերին օգնութեան։ Թուրքերը պաշարած են լինում վանքը, որտեղից մի թոյլ դիմադրութիւն է լինում։ Խումբը վրա է հասնում, առնում Թուրք ու քիւրդ զինված հրոսակներին երկու կրակի մէջ, ջարդում և փախցնում բոլորին, խլելով նրանց հաւաքած աւարներն ու Հազարափրկչի մասունքը»։

—

Երևանից հեռագրում են «Ռ.»-ին.

«Հանգստացրէք բոլորին. նահանգապետը ամեն տեսակ կարգադրութիւններ արել է։ Հանգստութիւնը վերականգնում են և գիւղերում։ Եթէ անկարգութիւններ տեղի են ունենում զանազան տեղերում, դրա պատճառն այն է, որ իշխանութիւնը չէ կարողանում միաժամանակ ամեն տեղ հասնել»։

—

Նախիջևանի և շրջակայքի պաշտպանութեան համար անցեալ օրը Նօտանէրի կայարանից արտակարգ կերպով ուղարկվեց Երևան և նրանից էլ այն կողմ նոր-բակառոյց երկաթուղու գծով պլատունների II և V բատալիօնների 6 հարիւրեակները, 23 օֆիցէրից և 700 զինուորից բաղկացած, 35 ձիով և 15 ֆուրգօններով։ Գնացքը Երևան պէտք է հասնի մայիսի 20-ին։

—

Ագուլիսից պ. Փանեանն ստացել է հետևեալ հեռագիրները.

Ագուլիս, 16 մայիսի, ցերեկվայ ժամը 4 և 35 րոպէ.

«Շրջակայքում կոտորած է և թալան։ Ագուլիսում մեծ յուզում է տիրում»։

Ագուլիս, 18 մայիսի, առաւօտեան 8 ժամ 45 րոպէին.

«Պօստը չէ ստացվում։ Դրութիւնն անորոշ է»։

Աբիեանց

—

Նախիջևանից պ. Ստեփան Գէորգեանը ստացել է հետևեալ հեռագիրը մայիսի 17-ին, երեկոյեան ժամը 3 և 40 րոպէին.

«Զահուկ գիւղում սպանվել են Արգարը, Սարգիսը, Մկրտիչը, Ստեփանը։ Ձեր ընտանիքն ազատվել է և տարվել Շրխմահմուտ. մնացել է առանց ապրուստի. անհրաժեշտ է օգնութիւն։ Սպանված են 50 հոգի հայեր։ Լիակատար աղքատութիւն է տիրում։ Մանրամասնութիւնները նամակով»։

Ալ. Մելիք-Դաւթեանց

—

Երեքշաբթի, մայիսի 17-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում, Փոխարքայի թոյլտուութեամբ տեղի ունեցաւ Թիֆլիսի հայ, մահմեդական, վրացի և ռուս ազգաբնակութեան ներկայացուցիչների մի խորհրդակցութիւն քաղաքագլխի նախագահութեամբ։

Նիստին ներկայ էին միայն հրաւիրված անձինք, թւով մօտ իննսուն հոգի։ Օտար հանդիսականներ չը կային։

Քննութեան հարցն էր թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել, որ Նախիջևանի տխուր դէպքերը արձագանք չը գտնեն ուրիշ տեղերում և մասնաւորապէս Թիֆլիսում։

Խօսեցին շատերը և պարզեցին, որ լուրջ տարաձայնութիւններ և թշնամութիւններ միայն այժմ տեղի չեն ունեցել հայերի և Թուրքերի մէջ և որ ներկայ լարված տրամադրութիւնը մի դժբաղդութիւն է, որ խոր հիմունքներ չունի, բայց ստանալով վարակիչ բնաւորութիւն, վտանգաւոր մի դիրք է ստեղծել երկու հարևան ազգութիւնների համար։ Թուրքերի մէջ լուրեր են տարածվում թէ հայերը պատրաստվել են նրանց կոտորելու, իսկ հայերի մէջ նրա հակառակը, թէ Թուրքերն են զինվել հայերին կոտորելու։

Մահմեդականների դագին հաւաստիացրեց, որ մահմեդականների մօտ Թիֆլիսում ոչ մի վատ դիտաւորութիւն չը կայ և որ նա նրանց կողմից պատրաստ է ստորագրութիւն տալ։

Մահմեդականները առաջարկում էին մի մասնաւոր միջնորդ դատարան հիմնել, որ քննէր այն թիւրիմացութիւնները, որոնք ծագում են մահմեդականների և հայերի մէջ։

Այդ առաջարկի դէմ առարկեցին, որ այդպիսի միջնորդ դատարան այն ժամանակ ուժեղ և ազդեցիկ կը լինի, եթէ նա ճանաչված լինի պաշտօնապէս և որոշված լինեն նրա իրաւասութեան սահմանները։

Ընդունելով միջնորդ դատարանի առաջարկը, հայերը իրանց կողմից բարձր համարեցին, որ ամենուրեք կազմվեն տեղական մասնաժողովներ, բաղկացած ազդեցութիւն վայելող հայ և Թուրք մարդկանցից, որոնք մտնեն ազգաբնակութեան մէջ և ամեն տեղ համերաշխութիւն քարոզեին, ցոյց տալով թշնամութեան վտանգաւոր և վնասակար հետևանքները։

Խօսք ծագեց և այն մասին, որ պէտք է լուրջ քննութեան ենթարկել այն պատճառները, որոնք առաջ են բերել թէ Բագուի, Երևանի և Նախիջևանի դէպքերը և թէ ներկայումս որոշ թշնամական տրամադրութիւն են ստեղծել երկրի տարբերի մէջ։

Ի վերջոյ խորհրդակցութիւնը եկաւ հետևեալ ձևակերպութեան։

«Մենք ներքոյ ստորագրվողներս, Թուրքերի ներկայացուցիչներս և մի խումբ վրացիներ, ռուսներ և հայեր, հաւաքվելով քաղաքային դումայի դահլիճում, Թիֆլիսի քաղաքագլխի նախագահութեամբ, ներկայ մայիսի 17-ին, խորին կերպով ցաւելով այն տխուր և կորստաբեր դէպքերի առիթով, որոնք տեղի են ունեցել Նախիջևանում և Նախիջևանի գաւառում, յայտնում ենք մեր ջերմ ցաւակցութիւնը անմիտ թշնամութեան զոհերին։ Ներկայ եղողներս մեր սրբազան պարտքն են համարում արձանագրել որ և է պատճառի բացակայութիւն մի այդպիսի թշնամութեան Թուրքերի և հայերի մէջ և արտայայտել անկեղծ ցանկութիւն, որ ամենուրեք երկրի մէջ, բազմացեղ մեր ազգաբնակութիւնը, չը հաւատալով չարամիտ և թշնամութիւն սերմանող լուրերին, միանայ խաղաղ և կուլտուրական գործի ասպարէզում յօգուտ հայրենի երկրի։ Որպէս զի ամուր հիմք դրվի մի այդպիսի միութեան համար, անհրաժեշտ դատեցինք ընտրել մի յատուկ յանձնաժողով, բաղկացած իւրաքանչիւր ազգութեան ներկայացուցչից և այդպիսի յանձնաժողովի վրա պարտք դրեցինք գործ դնել ամեն միջոց առաջն առնելու ամեն տեսակ տխուր պատահարների, որոնք տեղի ունեն Նախիջևանի գաւառում և խաղաղացնելու Թիֆլիսում գտնվող մահմեդականներին և հայերին։»

Երէկ, մայիսի 18-ին, երեկոյեան Թիֆլիսի դումայի դահլիճում տեղի ունեցաւ այդ յանձնաժողովի առաջին նիստը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

—

Մայիսի 9-ին, երեկոյեան 9 ժ. 30 րոպէին։

Նախիջևանում եղել են սպանութիւններ. յարաբերութիւնները լարվում են. վաղը մեկնում եմ Երևանի քաղաքագլխի հետ. գալիս են նաև փոխ-նահանգապետն ու Նախիջևանի խանը։

Կարապետ վարդապետ

—

Մայիսի 10-ին, երեկոյեան 11 ժամին։

Այլ և այլ ժամանակներում տեղի ունեցան սպանութեան և վիրաւորելու եօթը դէպքեր երկու կողմից. տիրում է վրդովմունք և լարված դրութիւն. վաճառատները փակ են. փաստերի մեկնութիւնը միակողմանի. Երևանից այսօր սպասում ենք փոխ-նահանգապետին, կարապետ վարդապետին և Երևանի ու Նախիջևանի քաղաքագլխներին. մանրամասնութիւնները կը հաղորդեմ, երբ եկողների քննութեամբ կը պարզվի իրողութիւնը։

Թովմա վարդապետ

—

Նախիջևանից, մայիսի 11-ին, երեկոյեան 6 ժամ 55 րոպ.։

Երէկ կէս օրին Ջահրինցի Թուրքերը յարձակեցին Շրխմահմուդ գիւղի նախիրը, իսկ գիշերը՝ փոխ-նահանգապետի գալուց յետոյ Ուղունօբայի Թուրքերը յարձակվեցին Խալիլու գիւղի վրա և սրախողխող արին Խաչատուր Բաբասեանի ամբողջ ընտանիքը և կողոպտեցին ամբողջ գոյքը։

Թովմա վարդապետ

—

Վեհափառի հրամանով փոխանորդ Թովմա վարդապետին տրվեց հետևեալ հեռագիրը մայիսի 9-ին։

Նորին Սրբութիւնը հրամայում է եռանդուն միջոցների ձեռնարկել շուտափոյթ վերականգնելու եղբայրական յարաբերութիւնները։

Եղիշէ վարդապետ

—

Մայիսի 12-ին, առաւօտեան գնացքով Նորին Սրբութիւնը շտապեց վերադառնալ Էջմիածին, որտեղ և ստացվեց հետևեալ հեռագիրը Աղէքսանդրօպոլի փոխանորդ Կիւրեղ վարդապետից.

Նախիջևանից 9 ժամին հեռագրում են, որ այնտեղ սոսկալի հրացանաձգութիւն է, հրդեհ, կրպակների թալան և դրութիւնը անտանելի է։

Կիւրեղ վարդապետ

—

Մայիսի 12-ին երեկոյեան.

«Այսօր քաղաքում տեղի ունեցան սոսկալի անկարգութիւններ, կոտորած, կողոպուտ. հեռագրի նահանգապետին. խոստացան զօրք ուղարկել։ Ժամանակաւոր հանգստութիւնը վերականգնած է. յոյս ունենք, որ կը կարողանանք վերջնականապէս խաղաղացնել։

Կարապետ վարդապետ

—

Մայիսի 13-ին, երեկոյեան 10 ժ. 45 րոպ.։

«Երրորդ օր է, որ Նախիջևանում տեղի ունի հայերի կոտորած, թալան և հրաձգութիւն Թուրքերի կողմից, որը ստացել է սոսկալի ծաւալ։ Սպանվածների, այրվածների և վիրաւորվածների թիւը ահագին է։ Թուրքերից սպանված է միայն երկու հոգի։ Այդ ամբողջ արհաւիրքը քաղաքից տարածվել է գաւառը, որտեղի հայերը աւելի անպաշտպան են։ Սպասվում է պարսկական քրդերի խմբական յարձակումն։ Երևանում ապրող Նախիջևանցի ձեր զաւակների կողմից խնդրում ենք Ձերդ Սրբութեան հովանաւորութիւն։

Լիազօր Մելիք-Անդրէասեան

—

Նախիջևան

Կարապետ վարդապետին

Անընդհատ հաղորդեցէք մանրամասնութիւնները. հարկաւոր դէպքում դիմեցէք Փոխարքային։

Մկրտիչ Կաթողիկոս ամենայն հայոց

Մայիսի 14-ին

—

Նոյն օրը Կարապետ վարդապետից ստացվեց հետևեալ հեռագիրը.

«Հասայ 11-ին. որոշեցինք ընտրել երկու ազգութիւններից հնգական ներկայացուցիչ. 12-ին, առաւօտեան 9 ժամին հաւաքվեցին խորհրդածութեան համար. երբ յանկարծ սկսվեց հրացանաձգութիւն, մնացին փակված եկեղեցու գաւթում։ Կողոպտված է շուկան։ Այնտեղի հայերից քչերը միայն ազատվեցին. մնացածներին սրս խողխող արին։ Առ այժմս գտնված է մօտ 30 դիակ, բացի վեց այրվածներից՝—Կարապետ Աղամեանից, նրա փեսայից, գործակատարից և երեք Խալաթօշլիներից։ Քիչ էր մնացել, որ Մելիք-Աղամալեանին սպանէին, շուկայի մի մասը վառեցին։ Հայոց բոլոր կրպակները մինչև վերջին փշրանքը ամենայն անողորմութեամբ կողոպտեցին։ Տեղական (команда) զօրքը հասաւ երկու ժամին—պահակ խմբերի բաժանված և կարողացաւ միայն հանգցնել հրդեհը, կանգնեցնել թաղերի վրայի յարձակումը և փոքր ինչ խաղաղութիւն վերականգնել, որը մինչև այժմս շարունակվում է։ Լուրերին նայելով՝ զոհերի թիւը հարիւրից աւելի է. երէկ տեղեկութիւն ստացայ ջահրեցիների և ուրիշ հայ գիւղերի յուսահատ կացութեան մասին։ Այստեղ ուղարկեցինք Զաֆար Կուլի խանին։ Ջահրեցիների մի մասը պաշտպանվելով փրկվեց սեփական տներում. շատ կանանց և երեխաներին պաշտպանեցին Թուրքերից մի քանիսը։ Զոհերի թիւը յայտնի չէ։ Ազատելով բոլոր կենդանի մնացողներին, հասցրել են Շէյխմահմուդ գիւղը, որտեղ հաւաքվել են Նազարապատի, Դիզուզունօբայի, Դեղուվարի, Խալիլուի և Քիւլթափայի բնակիչները, որոնց գիշերը օգնութիւն ուղարկեցինք։ Ասում են, որ մորթել են Հաջիվարի քահանային և այլոց, գիւղը վառել։ Գնում եմ այնտեղ։ Զօրքի բատալիօնը այսօր կը հասնի. խոստացան կազակների մի հարիւրեակ ուղարկել. բայց վերջնականապէս խաղաղացնելու և գաւառի հայերին փրկելու, նրանց կողոպտված գոյքը վերադարձնելու և մնացածները հատուցանելու և այդ աւերածութեան պատճառները պարզելու համար հարկաւոր են ընդարձակ միջոցներ։ Հեռագրեցինք Սուլթան Կրիմ-Գիրէյին, որ Փոխարքայի ուշադրութիւնը դարձնէ այդ բանի վրա։ Խնդրում եմ Ձերդ Վեհափառութեան միջնորդութիւնն ու ազդե-

ցութիւնը, որպէս զի շուտով նիւթական օժանդակութիւն հասցնեն արկածեալներին։

Կարապետ

—

Սոյն հեռագիրը Վեհափառ Հայրապետի կողմից նոյն օրն և եթ ուղարկվեց Փոխարքային, որպէս զի շուտով հրամայվի պատշաճաւոր իշխանութեան, որ ամեն տեսակ միջոցների ձեռնարկեն կանգնեցնելու չարիքը և վերականգնեն խաղաղ աշխատաւոր կեանքը։

Մայիսի 15-ին, առ. 8 ժ. 20 րոպէին

Երեկոյեան հեռագիր ստացայ, որ մահմեդականները կողոպտել են Երնջակը, Մեսրոպ արքեպիսկոպոսից խլել Հազարափրկիչը։ Հաղորդեցի Փոխարքային և ձիաւոր զօրք խնդրեցի գաւառին շուտափոյթ օգնութեան հասար, որի քրիստոնեայ ազգաբնակութիւնը ծայրահեղ վտանգի մէջ է։ Մնացածները մի քանի մահմեդականների օգնութեամբ փրկվեցին քաղաքում։ Եարմջայում սպանված են երկու հոգի։ Շէխմահմուդի կըտրիճները ցրվեցին աւերողներին, խլեցին Հազարափրկիչը և տարան Շէխմահմուդ։ Ս. ոանց ազգաբնակութեան մնացած տասը գիւղերը կողոպտել են. մնացածների վիճակն առայժմս յայտնի չէ։ Այս բոպէիս տեղի ունի յարձակումն Թմբուլի վրա. խնդրեցի օգնութիւն ուղարկել. երեկոյեան հասաւ հազարեակը (баталіонъ), մի բօտա (200) ուղարկեցինք Շէխմահմուդ։ Հարկաւոր են նոր ոյժեր, հեծելազօր։ Խնդրեմ միջնորդէք, որ արտակարգ լիազօրութիւններով օժտված մի մարդ ուղարկվի ձեռնհաս մարդկանցից կազմված յանձնաժողովի հետ, որպէս զի անմիջապէս կարգադրվի արգելել կողոպուտի Գարսկաստան անցկացնելը կամ թազցնելը, յետխլվի յափշտակած գոյքը և ամեն միջոցներով պաշտպանեն ազգաբնակութիւնը վերջնականապէս աղքատանալուց։

Կարապետ վարդապետ

—

Վեհափառի կողմից պատրաստվում է մի ընդարձակ հեռագիր Փոխարքայի անունով։

Եղիշէ ծ. վ. Մուրադեան

ՕՐՎԱՑ ԳԱՀԱՆԶԸ ԱԲԱՐԱՆՈՒՄ

(Նամակ Ափնագեղից, էջմիածնի գաւառ)

—

Աբարանում մի հարց, որ անընդհատ ծեծվում, համայնքների պառակտման, տարաձայնութիւնների պատճառ է դառնում, դա անհաւասար հողատիրութեան և սակաւահողութեան խնդիրն է։ Ազգաբնակութեան թւի հետզհետէ աճման հետ չեն ընդարձակվում մշակելի հողերի սահմանները, գիւղացին չէ էլ կարողանում բարձրացնել աշխատանքի ոլորակը, ուստի նա ստիպված է ապրել նոյն աննշան քանակութեան հողի արդիւնաբերութեամբ։ Իսկ սակաւահող դասի բազմացող ընտանիքի օրապահիկը հայթայթելու հոգսը, բնականաբար, առաջացրել է կանոնաւոր հողաբաժանութեան հարցը։ Այստեղ նկատենք, որ Աբարանում մշակելի հողերը արքունական են, սեփական հողեր բոլորովին չը կան։ Հասկանալի է, ուրեմն, այդ դէպքում «իւղալի պատառ» բաժին ունեցողների բռնած պախարակելի ընթացքը... Ինչ անէ փողի հրէշաւոր ճանկերում արիւնքամ վիճակի հասցրած խեղճ գիւղացին։

Անցեալներում Աշտարակի տեղական մասի հաշտարար դատաւորի պաշտօնակատարը գիւղերը շրջելով, քննում էր հողաբաժանութեան հարցը, նա առաջարկում էր հաձայնքի 2/3 մասի օրինաւոր ու վճռական համարված թւով հասարակական համ խօսական վճիռներ կազմել, բայց թէ որքան դժուարութիւնների հետ է կապված գրաւոր համաձայնութեան յանգելու գործը, այդ ցոյց է տալիս գիւղական գործ վարողների բռնած միանգամայն դատապարտելի դիրքը։ Անցեալներում և ներկայումս գոյութիւն ունի Աբարանում հողաբաժանութեան այդ սիստեմը. հողը նաֆարի (շնչի) վրա բաժանելով, առանց սեռի խտրութեան, որոշում է այդպիսով հողաշատ և սակաւահող ընտանիքների թիւը։ Առաջին ընտանիքը պարտաւորվում է մաս հանել երկրորդին իր տիրածի աւելորդ մասի կէսը միայն։

Դրանով, ի հարկէ, հարցը չէ ապահովվում ընդմիշտ։ Հողաշատ գիւղացու ունեցած աւելի կտոր հողը կը դառնայ կուսածաղիկ. հարկաւոր է ամբողջը դնել հասարակութեան տրամադրութեան տակ և երեք կամ հինգ տարին մի անգամ պարբերաբար հողաբաժանութիւն մտցնել գիւղում, որովհետև այդ ժամանակամիջոցում ընտանիքի անդամների թիւը կամ կաւելանայ, կամ կը պակասի։ Բայց մեր հարուստի համար ապշեցնող մի երևոյթ է զրկվել ահագին տարածութիւն կազմող վարելահողերից։ Ընդունած հողաբաժանութեան ձևը առաջացրել է մի երևոյթ, նոյն իսկ անբարոյականացուցիչ։ Հարուստը դտել է շահագործութեան մի նոր ասպարէզ. իր նշանված աղջիկը պահում է տանը մինչև 18—19 տարեկան հասակը, ապասելով հողաբաժանութեան հարցի վախճանին, եթէ նոյն իսկ տղայի հայրը հաձանում է իր ապագայ հարսի շնորհիւ հասանելիք հողը յետտալ հարնացու աղջկայ հօրը. դրանից ինչեր ասէք չեն ծագում—աղջիկ փախցնել, կռիւներ, մարդասպանութիւններ և այլն...

Երկու եղբայր բաժանվում են իրարից նրա համար միմիայն, որ մէկը նրանցից ունի երկու աղջիկ, որոնց շնորհիւ կը ստանար երկու նաֆարի հող աւելի, քան երկրորդ եղբայրը։ Իւրաքանչիւր շնչին ընկնում է 5 կօտ հող, կօտը (տեղական չափ է, 45 ֆ.) պուդի վերածելով՝ կը ստացվի 6 պուդ։ Հարցի բաւարար լուծման համար հարկաւոր է մեր գիւղական պաշտօնակատար անձանց ոչ թէ այդ առիթով ծագած մարդասպանութիւնների համար կազմած արձագրութիւններով արխիւներ հարստացնել, այլ այդ կենսունակ հարցին լրջութեամբ վերաբերվել։ Ցաւալի է նկատել, որ մեր տանուտէրները շատ են մեղանում իրանց խղճի և պարտականութիւնների դէմ գործում...

Հրաւիրում ենք պաշտօնակատար և ձեռնհաս անձանց լուրջ ուշադրութիւնը օրվայ հարցի կարևորութեան վրա, եթէ ոչ մի քանի գիւղերում այդ առիթով պատահած դէպքերը կարող են կրկնվել այստեղ էլ։

Մ. Թխոյեան

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ՀԱՐՑ

—

«Մշակի» № 80-ում Թիֆլիսի մեր անշարժ հոգևորականութեան արած անդրանիկ քայլը թարմ հոսանքի տպաւորութիւն է անում։

Այդ ցանկալի շարժման առիթով երկու խօսք կուզէի ասել։

Ցայտնի է, որ մեր կօնսիստօրները հոգևոր ատեան, այսինքն հոգևոր դատարան են կոչվում։ Իսկ դատելու համար, անշուշտ, որոշ orենfեեr են հարկաւոր, որպէս զի դատաւորը,—այս դէպքում, առաջնորդը,—թէ առանձին ու թէ կօնսիստօրական կազմի հետ,—իր դատը վարէ մի անգամ առ միշտ ընդունված և բարձրագոյն հոգևոր իշխանութեան կողմից հաստատված orենզrfի յայտնի յօդուածների հիման վրա։

Բայց «Положеніе»-ի հիմնվելու օրից այդպիսի բան մեր կօնսիստօրներում չէ եղել ու չը կայ։ Թէ առաջնորդը ու թէ կօնսիստօրը մինչև օրս դատել, պատժել, պատուհասել են կամ սեփական հասկացողութեամբ կամ խղճի թելադրութեամբ։ Հոգևորականը,—քահանայ է եղել, սարկաւագ, թէ դպիր,—անարատունչ կամ միայն տրտնջալով, տարել ու տանում է իշխող դրութիւնը, տիրող կամայականութիւնները։ Եթէ ընդդիմախօսելու փորձեր էլ եղել են, նրանք էլ «Օրէնք ի ձեռս առաջնորդաց են» բանաձև—ժայռին դիպչելով, փշուր-փշուր են եղել։

Սակայն, թէ ինչքան այս աննօրմալ վիճակը տանելի է ու ինչքան չարիքների դուռ է բաց անում ընդհանրապէս հոգևոր դասի ու մասնաւորապէս ժողովրդի համար,—դա ըստ ինքեան հասկանալի է։

Մեղադրվածը, իրան արդարացնելու համար, ոչինչ կայուն յենակէտ չունի։ Առաջնորդը կամ կօնսիստօրը ինչ ուզում է այն է «անօրինում»։ Դեռ, ինչքան էլ լինի, կարելի է լինում մի բան անել, որ և է ատեաման ազդել դատարանի վրա, երբ դատվողը կրթված հոգևորական է։ Բայց դուք մտէք անուսում, անլեզու մեղադրվածի դրութիւնը,—ուղղակի քըմահաձոյքների զոհ է գնում խեղճը։

Բայց ինչու՞ այս բոլորը, մինչև երբ...

Դատվողը պէտք է ունենայ որոշ օրէնսգիրք,—որին ինչպէս ինքը, այնպէս էլ իր դատաւորները պէտք է ենթարկվեն,—իր ուժերից վեր գործերի մէջ էլ՝ փաստաբան։

Ահա մի կարևոր ու հասունացած հարց, որի լուծելու ձեռներէցութիւնը մեր հոգևորականների կրթված մասից է սպասվում։

Է. ք. Ն.

Մոսկվա.

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

—

Մայիսի 2-ին

Գրեթէ մի ամբողջ տարի տպրելով Խարկովում և մօտ յարաբերութիւն ունենալով տեղական հայ գաղութի հետ, ուզում եմ «Մշակի» ընթերցողներին գէթ որոշ չափով ծանօթացնել վերոյիշեալ հայ ժողովրդի ներքին և արտաքին կենցաղի հետ։

Գաղութը կազմակերպվ՚ել է ամբողջ քսան և աւելի տարիների ընթացքում՝ մասամբ Կովկասի և գլխաւորապէս Թիւրքիայի հայերից։ Վերջիններիս հոսանքը, պէտք է ենթադրել, աւելի մեծ է եղել 96-ի սարսափների ժամանակ։ Կովկասահայերը մեծ մասամբ զբաղվում են մրգավաճառութեամբ և առ հասարակ մանրավաճառութեամբ, իսկ Թիւրքահայաստանցիները—հացթուխութեամբ։ Բացառութիւններ են կազմում արհեստաւորները, առևտրականներ ունեցողները և այլ գործերով զբաղվողները։

Գալով նրանց տնտեսական վիճակին, դրա մասին պէտք կարելի է ասել, որ բոլորն էլ բաւարար ապահովութեան տէր մարդիկ են, կան նաև դրամատէրեր՝ սակայն բացառութիւնների թւում։

Գաղութը որոշ կազմակերպութիւն ստացաւ և իր դէմը պարզվեց աղօթատան գոյութեան խնդիրը, որի հիմքը դրվեց Մամուէլեան քահանայի գալովը։ Չենք կարող այստեղ միջանկեալ չը յիշել և այն հանգամանքը, որ վերոյիշեալ քահանայից առաջ ամբողջ 15—20 տարի քահանայագործել է Խարկովում Նշան Տէր-Նշանեան քահանան, որի գոյութիւնը սակայն անյայտութեան մէջ կարելի էր որոնել... ինչ և իցէ, Խարկովի ցիր ու ցան ապրող հայ ժողովուրդը այս 3—4 տարի է, ինչ ապրում է հասարակական կեանքով և ճանաչվում է իբրև կազմակերպված մի համայնք։

Աղօթատունը մինչև այժմ վարձու է, սակայն, ինչպէս գրել էք «Մշակում» անցեալներում, սեփական տեղ և շինութիւն ունենալու խնդիրը արդէն վճռված է, և մօտ ապագայում իրականութիւն կը ստանայ ոչ միայն աղօթատան հարցն, այլ և դպրոցականը, որի շինութեան ամբողջ նիւթական հոգսը իր վրա է վերցնում սիմֆերօպոլցի դրամատէր պ. Պետրոս Թօփալեանը։ Մենք հաստատ համոզված ենք, որ Խարկովի նոր հիմնվելիք դպրոցը և աղօթատունը ապագայում մեծ դեր են կատարելու ոչ մենակ տեղական հայ ժողովրդի կեանքում, այլ և շրջականերում ապրող բազմաթիւ՝ օտարացման ու այլասերման հողի վրա կանգնած վաճառական հայերի կեանքում։ Մենք մեծ նշանակութիւն տալիս ենք ապագայ դըպրոցի գոյութեանը գլխաւորապէս այն հիման վրա, որ նրա շուրջը խմբված պիտի լինի հայ ուսանողութեան գիտակից, օգտակար մասն էլ, ուստի և ուսումնարանը ոչ միայն պիտի սահմանափակվի փոքրերի դաստիարակութեամբ, այլ և նրանց կիսաօտարացած և տգէտ ծնողների համար պիտի դասախօսութիւնների վայր դառնայ՝ օգտակար և մատչելի գիտութիւնների բոլոր ճիւղերում։ Դպրոցը իր մէջ պէտք է ունենայ նաև մի ընդարձակ դահլիճ՝ թատրոնական բեմով։ Գործի մեծութիւնը ակներև կը լինի, եթէ ուսանողութեան գործիչ մասը այստեղ էլ հանդէս գայ, որի մասին չենք կասկածում ի հարկէ։

Ինչ ասել կուզէ, այս ապագայի կեանքի հեռանկարը և սփոփիչ է և բեղմնաւոր։ Ինչեր չէ կարող անել ինտելիգէնտ տարրերի միացեալ գործունէութիւնը, ինչեր չեն անելու թարմ ոյժերի անկեղծ ձգտումները։ Ապագան թէև մութ է և շղարշված զանազան քօղերով, սակայն աչող պայմաններում այդ գործունէութիւնը կարող է մեզ վերյիշեցնել 70-ական թուականների ժրաջան գործունէութիւնը՝ մեր ուսանողական տարեգրութեան ամենափայլուն էջերը։

Սուրխաթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երևանի և Նախիջևանի միջև պօստային հաղորդակցութիւնը մի առ ժամանակ դադարել է նահանգապետի հրամանով։ Պատճառը Նախիջևանի գաւառի անկարգութիւններն են։

—

Լրագիրները հետևեալ մանրամասնութիւններն են պատմում Ալէքսանդրօպոլում վիրաւորված գաւառապետի օգնական կապիտան Պաւլովի դէմ եղած սպանութեան փորձի մասին։ Մայիսի 6-ին, ցերեկվայ ժամը 2-ին, կապիտան Պաւլովը դուրս է գալիս ոստիկանատնից և գնում դէպի տուն։ Բէբուտեան փողոցում նրա վրա յարձակվում են երեք անյայտ անձեր և մի քանի անգամ տրճանակ են արձակում նրա վրա, պատճառելով նրան 4 վէրք։ Երկուսը աջ ձեռքին, փշրելով ոսկորները, մէկը ձախ ձեռքին, միւսն էլ ձախ ոտին։ Նրան ուղեկցող ստրաժնիկը մի քանի անգամ հրացան է կրակում դէպի այդ 3 անձերը, որոնցից մէկը, ստրաժնիկի ասելով, երկու գնդակով վիրաւորվում է։ Իսկոյն այդ թաղը շրջապատվում է զօրքերով, խուզարկութիւններ են արվում, որ վիրաւոր անձին գտնեն։ Ամբողջ քաղաքը շրջապատվում է Սեվերսկի դրագունեան գնդի պահակներով։ Բայց չը նայելով այդ և միւս բոլոր ձեռք առնված միջոցներին, անկարելի եղաւ վիրաւորին գտնել։ Ներկայումս դատաստանական-քննական իշխանութիւնը ամենախիստ միջոցները է գործ դնում գտնելու թէ վիրաւորին և թէ նրա միւս ընկերներին։

—

Թիֆլիսում ապրող Զալիլ-Մամէդկուլի-Զադէ անունով անձը խնդիր է յարուցել, որ իրան թոյլատրվի Թիֆլիսում հրատարակել ադրբէջանի թուրքերէն լեզուով (տեղական թուրքերէն) մի ամենօրեայ լրագիր, անունը «Նօվրուզ» («Նոր-Օր.»)

—

Երէկ Թիֆլիսի դումայի դահլիճում կայացաւ վաճառականների, արհեստաւորների և այլ ժողովրդական խաւերի ներկայացուցիչների ժողով, որը խորհրդակցութիւն պէտք է ունենար այն մասին, թէ ինչ միջոցներով կարելի է քաղաքի ազգաբնակութիւնը հանգստացնել և ինչ միջոցներով առաջն առնել պատահող արիւնալի դէպքերի։

—

Ստացանք Նախիջևանի աղէտից ՀԱՍՎԱԾՆԵՐԻ օգտին Ս. Շահվերդեանից 3 ր., իշխան Սումբատովի դաբաղխանի կաշուէգործներից Մ. Օհանեանի ձեռքով հանգանակած 27 ր. ընդամենը 30 ր. 10 կ.։

—

Թիֆլիսի ոստիկանապետը «Кавказъ»-ում տպագրել է հետևեալ լուրը. «Թիֆլիսում շրջող լուրերը մայիսի 16—17-ին իբր թէ պատահած սպանութիւնների, վիրաւորումների և ընդհանրապէս ընդհարումների մասին հայերի և մահմեդականների մասին բոլորովին անհիմն և մտացածին լուրեր են։ Խնդրում եմ Թիֆլիսի ազգաբնակութեանը հաւատ չընծայել այդ լուրերին, որ տարածում են չարամիտ անձերը և հաւատալ, որ եթէ որ և է անկարգութիւն ծագի, անմիջապէս կը զսպվի ամենախիստ ու եռանդուն միջոցներով»։

—

Եա. Կ. Զուբալով անունով մի ազնուական խնդիր է ներկայացրել Կովկասի փոխարքային, որ թոյլատրվի իրան Թիֆլիսում հրատարակելու մի ռուսերէն ամենօրեայ լրագիր, առանց նախնական ցենզուրայի։ Անունը լինելու է «Закавказье»։

—

Անցեալ օրը Թիֆլիսի փոխ-նահանգապետ և նահանգապետի պաշտօնակատար Վ. Վ. Աւիշեվսկին այցելեց հայոց թեմական առաջնորդին և խնդրեց, որ իր կողմից մարդ ուղարկէ ներկայ լինելու նահանգապետի մօտ կայանալիք մահմեդական և հայ հոգևորականների ժողովին։ Առաջնորդը ուղարկեց իր կողմից Եփրեմ վարդապետին։ Ժողովի զբաղմունքի առարկան էր հայ և մահմեդական հասարակութիւնների մէջ համերաշխութիւն և խաղաղութիւն մտցնելու համար միջոցներ ձեռք առնելու մասին խորհել։

—

Անցեալ օրը Կովկասի փոխարքայի աղջիկը և հարսը մեկնեցին Թիֆլիսից Պետերբուրգ։ Փոխարքան և իր ամուսինը գնացել էին ուղղորդներին ճանապարհ դնելու մինչև Մցխէթ, ուր բոլոր հնութիւնները տեսնելուց յետոյ, ճանապարհ դրին մեկնողներին, իսկ փոխարքան ու իր կինը երեկոյեան վերադարձան Թիֆլիս։

—

Մայիսի 16-ի առաւօտեան ժամը 9-ին Գլդան գիւղից վերև, Թիօնէթի ճանապարհին, Թիֆլիսի գաւառի սահմանում 9 հոգի զինված աւազակներ յարձակվել են պօստի վրա և կողոպտել։ Սպանվել է պօչտալիօն Կազիցկին և Թիօնէթի գաւառի ստրաժնիկ Ստանօվիչը, կողքից ծանր վէրք է ստացել կառապան Աստուր Աբազեանը և վիրաւորված է մի ձի։ Աւազակները տարել են մի վինտովկա, մի տրճանակ և 28 հրացանի փամփուշտ։ Նրանց տարած փողն է 21 ր. 50 կ. և 19 ր. 55 կոպէկի էլ գերբօվի մարկաներ։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Այսօր Պարսկաստանի Ղ.չն քաղաքից ստացանք հետևեալ լուրը. մորեխն սկսում է օրէցօր աճել։ Այդ դժբախտութեան առաջը առնելու համար այստեղի վաճառականները ձեռնարկել են մի միջոցի, որով թէ մասամբ ազատած կը լինեն ժողովրդին քաղցի ձեռից և թէ պաշտպանած կը լինեն մասամբ էլ իրանց շահերը։ Նրանք յայտարարեցին ժողովրդի մէջ, թէ առնում են մորեխը և թէ նրա սերմը։ Ժողովուրդն էլ, որ շարունակ աղքատ դրութեան մէջ է լինում և միշտ գործ է որոնում, մեծ եռանդով կպաս

այդ գործին և մեծ քանակութեամբ հաւաքելով մորեխ, բերեց Ղօչան և ծախեց վաճառականներին, որոնք գնելով սկսեցին ոչընչացնել։ Թուրք վաճառականները առան 550 պ., հայ վաճառականները 1100 պ., նահանգապետը 500 պ., մաքսատունը 300 պ., իսկ բանկը յատկացրել է 100 ր.։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, մայիսի 8-ին

Մայիսի 3-ին Մարիամեան օրիորդաց դպրոցի սրահում կայացաւ Ռաշտի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, երկար ձգձգումներից յետոյ։ Հրաւիրված էին ժողովի 49 հոգի, բայց եկել էին 22. թէև ներկայ եղողները կէսից քիչ էին, բայց ժողովը վաւերական համարվեց, կասկածելով, որ երկրորդ անգամ չը պիտի կարողանան դրանից աւել ժողովականների թիւ ունենալ։ Առհասարակ Պարսկաստանում ժողովները դժուարութեամբ են հաւաքվում։

Ռաշտի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը գործել է մի քանի տարի բաւարար կերպով և մեծ օգուտներ է տուել ժողովրդի կրթական գործին. նրա ջանքերով պահվել է տեղիս օրիորդաց Մարիամեան դպրոցը, եթէ չեմ սխալվում 1898-ից մինչև անցեալ ուսումնական տարին։ Սակայն, չը գիտեմ ինչու, այս տարի ընկերութիւնը իր նպատակը դադարեցրեց և մի ամբողջ տարի է, որ բոլորովին դադարեցրել է իր գործունէութիւնը և մինչև օրս համարեա կազմալուծված դրութեան մէջ է գտնվում։

Նկատելով կանանց ընկերութիւնների տուած բազմաթիւ օգուտները պարսկահայերի կրթական գործին, որոնցից մէկն էլ այս ընկերութիւնն է ներկայացնում և որը ունեցել է իր, թէև համեստ, բայց արդիւնաւէտ գործունէութիւնը, չենք կարող այդ առիթով չը ցաւել, որ այդպիսի մի հիմնարկութիւն անգործութեան է դատապարտված մնացել մի ամբողջ տարի և նոյն իսկ ոչ մի կօպէկ մուտք չէ ունեցել։

Ընդհանուր ժողովը, նախ քան ընտրութիւններ կատարելը, որոշեց առաջիկայ ուսումնական տարվանից կրկին կառավարել իր միջոցներով օրիորդաց Մարիամեան դպրոցը և անհրաժեշտ համարեց բաց անել կար ու ձևի արհեստանոց, անհետևանք թողնելով մանկապարտէզի բացումը։ Չը գիտեմ ինչու, ընդհանուր ժողովը աւելի անհրաժեշտ համարեց կար ու ձևի արհեստանոցի կարիքը մանկապարտէզից, մինչդեռ հարիւրաւոր երեխաներ կան տներում, որոնք զուրկ են նախնական կրթութիւնից, որին անկարող է բաւարարութիւն տալ ընտանիքը։ Մանկապարտէզը կը լինէր այդ փոքրերի համար մի փրկարար ապաստարան, որով և թեթևացված կը լինէր ուսումնարանի գործը։ Օրիորդները ամեն ժամանակ էլ կարող են թէ տներում և թէ մասնաւոր դասերով սովորել կար ու ձևը։ Ցանկալի կը լինէր, որ ընկերութիւնը փոխէր իր այդ որոշումը և միւս տարվանից բանար մանկապարտէզ։

Ընդհանուր ժողովը, չը կարողանալով հաշիւները տեսնել, որովհետև մի քանի տարի հաշիւներ չէին տուած, յանձնարարեց նորընտիր վարչութեանը, որ նա տեսնէ բոլոր հաշիւները, տպագրել տայ և բաժանէ ժողովրդի մէջ։ Նոյնպէս ընդհանուր ժողովի որոշումով ընկերութեան բոլոր դրամները պիտի վերցնել մասնաւոր տեղերից և յանձնել անգլիական բանկին։

Գաղտնի քուէարկութեամբ վարչութեան անդամներ ընտրվեցին Տ. Տ. Հ. Տէր-Օհանեանց, Մ. Մելիք Յովսէփեանց, Մ. Գալըստեանց, Ա. Բաբսեղեանց և Շ. Մ. Պետրոսեանց։

Այժմ մնում է նորընտիր վարչութեանը կանոնաւորել ընկերութեան քայքայված գործերը և նոր եռանդով ու հաստատամտութեամբ շարունակել ընդհատված գործունէութիւնը, որի համար սրտանց աջողութիւն ենք ցանկանում։

Տ. Մ. Գրիգորեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 մայիսի

ԳՈՒՆԶԺՈՒԼԻՆ, 16 մայիսի։ (Սեփ. թղթ.)։ Գլխաւոր բանակը ժամանեց պրուսական պրինց Լէօպոլդը և հանդիսաւոր կերպով դիմաւորվեց գլխաւոր հրամանատարի, շտաբի և պատուաւոր պահակի կողմից։

ՏՕԿԻՕ։ Ամենամեծ սենսացիա առաջացրեց երեկոյեան ստացված տեղեկութիւնը ծովային ճակատամարտի հետևանքի մասին։ Անսպասելի էր այն փաստը, որ եապօնական կորուստները այնքան աննշան են։ Ճակատամարտի պայմանները գերազանց էին եապօնացիների համար։ Եապօնական նաւերի արագընթացութիւնը գերակշռում էր ռուսական նաւերի ընթացքի արագութիւնից։ Աստղալից երկինքը նպաստում էր եապօնական ականանաւերի գործողութիւններին։ Հալածանքը շարունակվում է։ Ճակատամարտին մասնակցող ռուսական նաւերի թիւը 26 էր։—Բօրսայում երեկոյեան չափազանց բարձրացաւ արժէթղթերի գինը։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 17 մայիսի։ Տօկիօի ամէրիկական ծովային գործակալի զեկուցման համեմատ, ռուսական էսկադրան, եապօնացիների յարձակման ըստէին, անցնում էր ջրանցքը երկու զօրասիւններով. աջ կողմից էսկադրային զրահակիրները, ձախ կողմից կրէյսերները։ Առջևից գնում էր «Ժէմչուգ», նրա ետևից «Բօրոդինօ», «Օրէօլ», «Իշխան Սուվորով», «Կայսր Ալէքսանդր III», «Օսլեաբեայ», «Սիսոյ Վելիկի», «Նավարին» և «Նիկոլայ I». ապա «Ադմիրալ Ուշակով», Ադմիրալ Սենյավին» և «Գենեռալ Ապրակսին I»։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 16 մայիսի։ Եապօնական միսսիայի անդամների խօսքով, Եապօնիայում այն կարծիքը կայ, որ վերջին աջողութիւնների հետևանքը կը լինի խաղաղութեան դաշինքի կապելը։ Բանակցութիւնները պէտք է սկսվեն Վաշինգտօնում։ Ծովապետ Դիւի նոյնպէս նախադուշակում է խաղաղութիւն։—Տօկիօի բրիտանական դեսպանը զեկուցանում է, որ այն նաւը, որ ջրասոյզ արեց ծովապետ Բօժէստվէնսկին, հանելով նախապէս կօմանդան, բրիտանական շոգենաւ էր, և ոչ թէ ամէրիկական։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտէրիայի գեներալ Լինէվիչի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թւի մայիսի 17-ից. «Հակառակորդի զօրաբաժինը, որ մայիսի 17-ին գրաւած ունէր Սիմեաչէն, մայիսի լոյս 13-ի գիշերը մաքրեց այդ գիւղը և հեռացաւ դէպի հարաւ Այշրիլիպու գծի վրա։ Զախ թևի վրա հակառակորդի առաջապահ զօրամասերը մայիսի 12-ին աշխատում էին քշել մեր պահակախմբերը, բայց յետ մղեցին»։

ՊԱՐԻԶ, 17 մայիսի։ Իր զեկուցման մէջ Տօգօ ակներև կրճատում, պակասեցնում կամ ծածկում է եապօնացիների իսկական կորուստները։ Շանգհայից ստացված հեռագրի համաձայն, ջրասոյզ են արված եապօնական եօթ նաւեր, որոնցից երկուսը զրահակիրներ են։—Բօռոշիլովի թաղումը աչքի էր ընկնում իր պարզութեամբ։ Ներկայ էր անագին հասարակութիւն։—Սկսվեցին զրաղմունքները Հաագի միջազգային կոնֆէրէնցիայում Տիտոնիի նախագահութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 17 մայիսի։ Սըր Զարլզ Դիլկ, նշանաւոր գործիչը, «Դէյլի Նիւս» լրագրի ներկայացուցչի հետ խօսակցելու ժամանակ ասեց, որ նա չէ կարող արտայայտել իր բարձր կարծիքը եապօնացիների քաջութեան մասին, չը յիշելով միաժամանակ այն նշանաւոր արիասրտութիւնը, որ ցոյց տուին ռուսները Եապօնիայի ափերի մօտ անցնելու փորձի ժամանակ այդքան երկար և վտանգաւոր ճանապարհորդութիւնից յետոյ։ Զարմանալի արիութիւնը, որ անհրաժեշտ էր այդպիսի վտանգներին համարձակ դիմաւորելու համար, կընդունէ և կը գնահատէ ամբողջ աշխարհը։

ՏՕՐՆ։ Սկսվեց նախկին օբէր-լէյտենանտ Վեսսէլի դատը, որը կասկածվում է լրտեսութեան մէջ Ֆրանսիայի համար։ Վեսսէլ մեղադրվում է դօկումէնտները կեղծելու և խաբեայութեան մէջ։

ԵԼԻՍԱՒԵՏՊՕԼ, 16 մայիսի։ Ազնուականների համաժողովը որոշեց յայտնել, որ ինքն դատապարտում է Նախ Չևանի դէպքերը և խնդրում է լրագիրներին չը տպել տենդենցիոզ յօդուածներ Բագուի ողբերգութեան վերաբերվամբ։

ԿՕՎՆՕ, 17 մայիսի։ Ներկայանալով զեներալ-նահանգապետին, Կօշնօի ազնուականները խնդրեցին արկանել առ ոտս Թագաւոր Կայսրի հաւատարիմ հպատակութեան զգացմունքները մայիսի 1-ի Բարձրագոյն ուկազի առիթով։ Գեներալ Ֆրեզէ անյապաղ կատարեց ազնուականութեան խնդիրքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Պատճէն Եապօնիայի դէմ գործող բոլոր ցամաքային և ծովային ուժերի գլխաւոր հրամանատարի ամենահպատակ հեռագրից։ «Մայիսի 16-ին Վլադիվոստոկ եկաւ 2-դ կարգի «Ալմազ» կրէյսերը։ Կրէյսերի հրամանատարը զեկուցեց, որ մայիսի 14-ին ծովապետ Բօժէստվէնսկու էսկադրան Ցուսիմեան ջրանցքում կուի բռնվեց եապօնական նաւատորմի հետ։ Ցերեկվայ կուի մէջ խորտակվեցին. «Իշխան Սուվորով», «Բօրոդինօ» և «Օսլեաբեայ» զրահակիրները և «Ուրալ» կրէյսերը։ «Կայսր Ալէքսանդր III» զրահակիրը սաստիկ վնասուածքներ ունէր։ Ճակատամարտի սկզբում վիրաւորվեց գեներալ-ադիւտանտ Բօժէստվէնսկի, որը փոխադրվեց մէկ ուրիշ նաւի վրա։ Երբ էսկադրայից կրէյսերն անջատվեց, մութն ընկնելիս, կուրը վերսկսվեց։ Գիշերային կուի հետևանքները անյայտ են։ «Ալմազ» կրէյսերը կտրվելով մնացած էսկադրայից, հասաւ Վլադիվոստոկ։ Վլադիվոստոկի նաւահանգստի հրամանատարի միջոցով «Ալմազ» կրէյսերի հրամանատարից ստացված լրացուցիչ տեղեկութիւնների համեմատ, ցերեկվայ կուի ժամանակ «Կամչատկա» փոխադրանաւը շատ լուրջ ջնասուածքներ ունէր։ «Ալմազը» կտրված էր էսկադրայից և ապա, չը կարողանալով միանալ նրա հետ, գնաց Վլադիվոստոկ։ «Ալմազի» վրա սպանվեց լէյտենանտ Մօչալին և 4 զինուոր։ Վիրաւորվեցին 10 զինուորներ, որոնցից 3-ը շատ ծանր։ Տեղեկութիւններ չը կան թէ խորտակված նաւերի վրա գտնվողներից ով է ազատվել կամ ով է սպանվել։

ԼՕՆԴՕՆ, 16 մայիսի։ Բալթիւր հիւանդացաւ քաղաքական նշանաւոր կօմբինացիաների քանդվելու պատճառով։

ՊԱՐԻԶ, 17 մայիսի։ Մալտայից Կրետէ են ուղարկված 543 օֆիցէր և զինուոր։ Անգլիական զօրաբաժինները երէկ գրաւեցին Կանդիայի երկու նշանաւոր կէտերը։ Գերմանական և աւստրիական ներկայացուցիչները երկրագործական կօնգրէսում կատված են յայտնում կօնգրէսի գործնական հետևանքների մասին։ Անգլիացիները և ամէրիկացիները սառն են վերաբերվում նրան, իսկ ֆրանսիացիները չեն ցանկանում նպաստել աջողութեանը։—Խէդիվը երէկ ժամանեց Կ. Պոլիս և այցելեց սուլթանին։—Բ. Դուռը դեսպանութիւն է ուղարկում Թագաժառանգ պրինցի պսակադրութեանը։

ԲԵՐԼԻՆ, 17 մայիսի։ Երէկ ժամանեց պրինց Արիսուգավան և կայարանում դիմաւորվեց կայսրի և Թագաժառանգ պրինցի կողմից։ Ժամանեց Զէրնօգօրիայի իշխան Նիկոլայ։ Նրան դիմաւորեց պրինց Էյտել Ֆրիդրիխ։

ՀՕԳԵՆՀԱԳԷՆ, 17 մայիսի։ Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Նօրվէգիայի օտար հիւպատոսները հրահանգներ ստացան չը ճանաչել ժամանակաւոր կառավարութիւնը։

ՊԱՐԻԶ, 17 մայիսի։ Ռուսների պարտութեան լուրը մեծ յուզմունք է առաջացնում Պարիզում։ Երկիւղ են կրում, որ Եապօնիան, աջողութիւնից արբեցած, աչք կը գցէ Հնդկաստանի վրա։ Գերակշռում է այն կարծիքը, որ եապօնացիները ծածկում են ճշմարտութիւնը, որովհետև անկարելի է, որ Տօգօի էսկադրան լուրջ ջնասներ չը կրէր։ Ֆրանսիական մամուլը միաձայն գովում է ռուսների քաջութիւնը, բայց խոստովանվում է խաղաղութեան անհրաժեշտութիւնը։ Գերմանական աղբիւրներից եղած տեղեկութիւնների համաձայն, Վլադիվոստոկի ճանապարհին բալտիական էսկադրայի ողջ մնացած մասերի և Կամիսուրայի էսկադրայի միջև նոր ճակատամարտ տեղի ունեցաւ։ Վիէննայի քաղաքական շրջաններում յոյս ունեն խաղաղութիւն կնքելու վրա։

ՏՕԿԻՕ, 16 մայիսի։ Այստեղ ասում են, որ Բօժէստվենսկու բռնած ռազմական կարգն արագացրեց նրա պարտութիւնը։ Բօժէստվենսկին տեղաւորել է զրահակիրներն արևելքից, իսկ կրէյսերներն արևմուտքից, իսկ կենտրոնում զետեղել է ամենաշատ թւով երկրորդական նաւեր։ Եապօնական կրակը շուտով այդ կենտրօնը դրեց շփոթման մէջ, որի պատճառով թևերը տուժեցին։ Ռուսական լաւագոյն մարտանաւերը շուտով շարքից դուրս ընկան։ Ենթադրում են, որ ընկղմված ռուսական նաւերում տօրպէդներ են ընկել։—Մասէբօ են բերված 2220 գերիներ, որոնց թւում «Ծովապետ Նախիմով» կրէյսերի հրամանատարը։ Գերիների հաղորդածի համաձայն, Վլադիվոստոկեան էսկադրան հրաման ստացաւ ծով դուրս գալ, բայց յետ վերադարձաւ կարճ ժամանակ լողալուց յետոյ։

18 մայիսի

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 17 մայիսի։ Կայացաւ երկրորդ նիստը Հօգէնսալի գործի առիթով, որը մեղադրվում է սենատի պրօկուրօրի սպանութեան մէջ։ Մեղադրեալը երկու ժամ շարունակ կարդում էր իր պաշտպանողական գրութիւնը։ Մի քանի վկաների հարցուփորձի ենթարկելուց յետոյ՝ գործի քննութեան շարունակութիւնը յետաձգվեց յունիսի 6-ին։

ՆՕՎԳՈՐՕԴ, 17 մայիսի։ Երկու օր է, որ տեղական տպարանների գրաշարները գործադուլ են արել։ Միջոցներ են ձեռք առնված մասսայական անկարգութիւնների առաջն առնելու համար։

ՐԻՎԵԼ, 17 մայիսի։ 200 գործակատարներ աշխատանքները դադարեցրին հացագործարաններում։ Ոստիկանութեան երևալուն պէս մեծ մասը ցրվեցին։

ԼՕՆԴՕՆ, 17 մայիսի։ Տօկիօից եապօնական միսսիայի ստացած հեռագրի համաձայն, եապօնացիների բռնած ռուսական 4 մարտանաւերը մայիսի 17-ին բերված են եապօնական նաւահանգիստները։ Էսկադրեան զրահակիրը «Օրեօլը» տարված է Մայձուրու, «Նիկոլայ I կայսրը», «Ծովապետ Սեվանինը» և «Գենեռալ-Ադմիրալ Ապրակսինը» տարվել են Սասէբօ։

ԻՕԿՕՀԱՄԱ, 17 մայիսի։ Վանիշիմայից բերված է մի ոչ-ռուսական նաւ 200 օֆիցէրներով ու զինուորներով։ Ինուբօէի դիմացովն անցկացան ռուսական նաւեր, դիմելով դէպի հիւսիս։

ՇԱՆԳՀԱՅ, 17 մայիսի։ Ժամանեց «Կօրէա» ածխատար շոգենաւը մեծ պատուածքով աջ կողքին, ուղիղ ջրագծի վրա։ Ժամանեց նոյնպէս քարշող «Սվիր» շոգենաւը։ Երկուսն էլ մեկնել են Ցուսիմեան նեղուցից առաւօտեան, մայիսի 14-ի ճակատամարտն սկսվելուց մի քիչ յետոյ։ Հաղորդում են, որ տեսել են եապօնական 3 նաւ ընկղմվելիս և 5 հատ էլ ջնասված։ Ռուսականներից 4 հատ ընկղմեցին, 4 հատն էլ ջնասվեցին։ Ռուսական նաւերի մեծ մասը պատուեց անցաւ նեղուցը և դիմեց դէպի հիւսիս, հալածված եապօնացիներից։

18 մայիսի

ԼՕՆԴՕՆ, 17 մայիսի (Սեփ. թղթ.)։ Գովաբանում են Բօժեստվենսկու արտակարգ քաջութիւնը։ Ենթադրում են, որ դրված է եղել անհրաժեշտ վիճակում գնալ թշնամու դէմ հէնց այն տեղում, ուր ամենից շատ յաղթվելու երկիւղ կար։ Բոլորը խօսում են դրութեան մասին, իբր խաղաղութիւն խոստացող վիճակի մասին։ Առաւօտեան և երեկոյեան լրագիրները, առանց բացառութեան, խօսում են խաղաղութեան մասին՝ իբր ռուսական էսկադրայի անաջողութեան անհրաժեշտ և ցանկալի արդիւնքի մասին։ Պարիզից հաղորդում են, որ Ֆրանսիական և ռուսական կառավարութիւնների միջև բանակցութիւններն անմիջապէս կը սկսվեն, այն ինչ Նիւ-Եօրկում Ռուզվէլտի բարեկամները նորից ագիտացիա են անում, որ Ռուզվէլտն իր վրա առնէ խաղաղութեան նախաձեռնութիւնը։ Ամբողջ մամուլն արդէն յուսատես կերպով է նայում Ռուսաստանի ապագայ աջողութիւնների հնարաւորութեան վրա և կոչ է անում պատերազմը դադարեցնելու։

ՊԱՐԻԶ, 17 մայիսի։ Սպանական թագաւորը այցելեց նախագահ Լուբէին։ Ամբոխը ողջունում էր թագաւորին բոլոր ճանապարհի վրա։ Թագաւորը Լուբէին յայտնեց իր զմայլանքը եղած ընդունելութեան համար։ Յետոյ թագաւորը ուղևորվեց արտաքին գործերի մինիստրութիւնն և իր ադիւտանտի միջոցով այցետոմսեր ուղարկեց սենատի և պատգամաւորների ժողովի նախագահներին։

ՎԻԷՆՆԱ, 17 մայիսի։ (Բերլինի վրայով)։ Կայացաւ դատարանի վճիռը Տրիէստի ռումբերի գործի մասին։ Սուբանը դատապարտված է 6 ամսվայ, իսկ Դէնաուլը 8 ամսվայ բանտարկութեան կայսրին վիրաւորելու համար, իսկ Սալատէյը դատապարտվեց 100 կրոն տուգանքի՝ գաղտնի ընկերութեան մասնակցելու պատճառով։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 17 մայիսի։ (Բերլինի վրայով)։ Ցէյէրվարիի միսսիան անաջողութիւն կրեց։

ԲԵԼԳՐԱԴ, 17 մայիսի։ Միտրօպոլիտ Ինոկէնտիսի վիճակը երէկվանից անյուսալի է։

ՊԱՐԻԶ, 18 մայիսի։ Ելիսեան պալատում կայացած հանդիսաւոր ճաշի ժամանակ թագաւորը նստած էր նախագահի և տիկին Լուբէի միջև, Լուբէն տօստ առաջարկեց, որի մէջ ասաց, որ Ֆրանսիայի և Սպանիայի միջև երբէք թիւրիմացութիւն չէ եղել, յարաբերութիւնները եղել են ամենաբարեկամական և որ փոխադարձ ջանքերը խաղաղութիւնը պահպանելու համար, ապահովում են դաշնակցութեան ապագան։ Ալֆոնս թագաւորը պատասխանեց։

որ ինքը խորապէս զգացված է փառահեղ ընդունելութիւններովը և ցոյցերովը, որոնք աւելի ևս սերտ կերպով կը կապեն երկու երկիրներին։ Թագաւորը խօսակցում էր Դէլկասէի հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով. իսկ Թիֆլիսինը 58 րոպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշուել).

	Գօստ.	Մարդ.	Արագ.	Ապր.
Բաքուից դուրս գալը	4.33	12.38	1.18	5.10
Թիֆլիս հասնելը	10.43	5.51	2.28	11.18
Թիֆլիսից դուրս գալը	11.28	6.39	10...	6.50
(Թիֆլիսի ժամանակով)	12.26	7.37	10.58	7.48
Բաթում հասնելը	12.31	7. 8	8.16	12.42
Բաթումից դուրս գալը	5.55	10. 9	9.33	
Թիֆլիս հասնելը	6.29	10.33	7.39	
Թիֆլիսից դուրս գալը	7.29	11.13	4.59	
(Թիֆլիսի ժամանակով)	8.27	12.11	5.57	
Բաքու հասկելը	1.—	4.29	5.46	
Երևանից դուրս գալը	12.25		9.40	
Կարսից » »	4.12		1.17	
Ալէքսանդրոպոլ »	7.50		5.26	
Թիֆլիս հասնելը »	5.24		3.28	
Թիֆլիսից դուրս գալը	11.50		2.50	
Ալէքսանդրոպ. » »	10.50		2.44	
Կարս հասնելը	2.20		6. առաւօտ.	
Թիֆլիս »	4.48		8.52	

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներ. և նեարդային
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—19 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕՎՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Կը վերադառնայ արտասահմանից Պետրոգրադ մայիսի 10-ին և այդ ժամանակից կը սկսէ իր ընդունելութիւնը։ Հասցէն՝ Ելիզավետինսկի փողոց, ռուսաց մայր եկեղեցու յետև, տուն Արխիպովի։ (ռ. ե.)

ԲԺՇԿ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ
Անցեալ տարիների նման այս ամառ ևս կընդունէ հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում։ Հասցէն՝ Ջրսենտուկի, Верхная Курсовая ул., дача Николаевой. (Կ. Ե. ռ.) 6—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ե.ռ.) 85—100

Վարձով է տրվում
ապահովութեամբ կամ ծախվում է
տիկ. Ե. Մուշեղեանի
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ ԿԱՐՍ ՔԱՂԱՔՈՒՄ
Հիմնարկութիւնը գոյութիւն ունի 1880 թուականից, արժանացել է նուէրների և վայելում է քաղաքացիների բարեհաճ վերաբերմունքը։
Գայմանների մասին դիմել տիկ. Ե. Մուշեղեանին, իր Թիֆլիսի լուսանկարչատունը, Դվօրցովայա փողոց, տ. վրաց ազնուականութեան։ (Չ. ռ. կ.) 10—10

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ՋԱՆԵԱՆԻ
«ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ»
Գինը 10 կոպէկ։
Դիմել հեղինակին Балаханы, Рамани Манташева. 6—5

ՀՐԱՒԷՐ
Մայիսի 22-ին, կիրակի օրը ժամի 12-ի սուրբ պատարագից յետոյ, քաղաքիս «Թանդոյեան» սուրբ Աստուածածին եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցին լսելու երեսփոխանական հաշիւների վերաբերմամբ հաշուառտուների զեկուցումը։
Գործակալ Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեան։ (Հ. Շ. Կ.) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ
հինգշաբթի, 1905 թ. մայիսի 26-ին, տեղափոխվում է իր ամարային շինութիւնը, ուր մի և նոյն օրը, ցերեկվայ ժամը 3-ին, կայանալու է ընդհանուր ճաշ իր անդամների ու կանոնիդատների և նրանց ընտանիքների համար, վճարը 1 ր. 25 կ. անձից, առանց գինու։ (19, 22, 26) 1—3

Հայուհի, որ գիտէ ֆրանսերէն և մի փոքր էլ ռուսերէն, ու մուզիկա, ցանկանում է դասեր ունենալ այստեղ, Թիֆլիսում, կամ քաղաքից դուրս, կամ ուղեկցել արտասահման։
Հասցէն. Въ конторѣ Общества учительницъ и воспитательницъ. Графская ул. и Троицкій пер. д. Теръ-Никогосова. (Հ. Կ. Ե.) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմիոնովսկայա փ. № 20.
(Ե. Հ. Շ. Կ.) 15—30

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
Պատմական էվէպ
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ։
Ծախվում է 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, 2) Թիֆլիսի գրավաճառոցներում։
Գրավաճառները և գումարով գնողները զիջում կը ստանան, եթէ դիմեն ուղղակի հեղինակին։

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՈՒՉԸ
յայտարարում է, որ իրանց որդիներին պատրաստական դասարանի կրտսեր բաժանմունքում տեղաւորել ցանկացողների խնդիրների ընդունելութիւնը տեղի է ունի ամեն օր, բացի տօն օրերից, դպրոցի դիւանատանը ցերեկվայ ժամը 10—1-ին։
Պատրաստական դասարանի կրտսեր բաժանմունքն ընդունվում են 7—9 տարեկան տղաներն առանց որ եւ է քննութեան։ 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
Պետերբուրգում ընդունում է սիֆիլիսի, միզասեռական և վիրաբուժական հիւանդ։ (ա. օ.) 8—50

ԳԻՄՆԱԶԻԱ ԱՒԱՐՏԱԾ
ՄԻ ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ
ցանկանում է ընտանիքի հետ գնալ Կովկասեան հանքային ջրերը դասատուի պաշտօնով։ Կարող է պարապել ինչպէս բոլոր առարկաներից, նոյնպէս և հայերէնից ու երաժշտութիւնից։ Հասցէն Վելեամինովսկի փողոց № 6 աջ զանգը, կամ «Մշակի» խմբագրատանը։ (Շ. Ե. Հ) 3—5

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Գ. Շերվազանեանց
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, լուսանկար Լալայեանցի բնակարան։

Բժիշկ Ա. Մխիթարեանց
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղատան կից։ (ա. օ.) 12—80

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. Քաբանեանց
մեկնեց Կովկասի հանքային ջրերը և անցեալ տարիների նման այս ամառը ևս կընդունէ ներքին և ջղային հիւանդութիւն ունեցողներին Պետրոգրադում և Էսպէնտուկիում մայիսի 17-ից։ (Կ. Ե. Չ.) 4—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՆՃՄԱՐՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Գեղարուեստական հրատարակութեան II և III պրակները
Կազմ. և հրատ. Լ. Եղիազարեան և Ռ. Մարտիրոսեան ճարտարապետութեան պրոֆէսոր ակադեմիկ Գ. Դ. Գրիմմի խմբագրութեամբ։
Այդ տետրին կցած է Հախպատի վանքի համառօտ պատմական տեսութիւնը։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ շարունակվում է Ե. Ծատուրեանի խանութում—Դվորցովայա փող., Թիֆլիսում։ 10 պրակը (50 հելիոտ. աղիւսակ. in quarto լուսանկարներով և գծանկարներով)—հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն բնագրի հետ միասին ճանապարհածախսով 12 րուբլի։ Կարելի է մաս մաս վճարել։
Տպագրվում է միայն 300 օրինակ, Պետերբուրգում, «Голике и Вильборгъ»-ի մօտ։
Ծանօթանալու համար օտարաքաղաքացիները կարող են պահանջել I պրակը (5 աղիւսակ), ուղարկելով 1 բուբլի 10 կոպէկ։
Դիմել. Тифлисъ. Мадатовская ул. 17, Рубену Мартиросяну. (Հ. Կ. Կ.) 1—3

Մ. Գ. ՍԱՖԱՐԵԱՆ
ԺԱՌԱՆԳՆԵՐԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ
տեղափոխվեց Ալէքսանդրեան փողոցը, սեփական տուն, № 56, 10-րդ քաղաքամասում։ (20, 23 և 26) 1—3

ՄԵԶ ՀԵՏ ԱՄԱՌԱՆՈՑ ԵՆՔ ՎԵՐՑՆՈՒՄ
աշակերտներ պատրաստելու բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից։ Առարկաների աւանդութեան մէջ աշխատանքի բաժանումը, իսկ նոր լեզուներից առանձին մասնագէտ։ Авчальская ул. 9 № 53, студенты А. и К. (Ե. Հ. Շ.) 2—7

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՀԱԶԱՐ ՎԵՑՀԱՐԻՒՐ ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ
Տպագրվում է Ս. Էջմիածնի, շրջակայ վանքերի և նշանաւոր վայրերի նկարներով ֆոտոտիպիական մի ալբօմ, բաղկացած քսան նկարից, որ իր կատարելութեամբ, մեր ցարդ եղած հրատարակութեանց գլուխ գործոցը կարող է համարվել։
Ցանկանալով միաժամանակ, որ մեր այս հրատարակութիւնը ծառայէր որպէս ուղեցոյց ինչպէս ազգային նոյնպէս և օտար ճանապարհորդներին, ալբօմին կցված կը լինի երեքլեզուեան մի համառօտ նկարագիր։
Ալբօմը կը տպվի երկթերթ կարդոնի վրա, դիրքը 18×24 երես, արժէքը 1 ր. 50 կոպ.։
Ցանկացողները թող բարեհաճեն վաղօրօք դիմել մեզ, որ քանի ուշ չէ, կարողանանք որոշել տպագրելի քանակութիւնը։
Հասցէ. Тифлисъ, фототипія Март. Гнуни, Михайловск. № 38.
(Կ. Ե. Հ.) 8—15

ԴԷՊՕ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Եղբ. Յակոբջանեանցներ եւ Սարգսեանց“
Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեանի տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջին ամառվայ սեզօնի տարազով պատրաստած հագուստներ։
Գները չափաւոր են և առանց սակարգութեան։ (Շ. Հ.) 41—100

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնաբերական ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՒ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԵՒԼԷՐ“
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնաբերական
ԿԱԶՈՒԵՂԷՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տելեֆոն № 346. 81—70 Երևանեան հրապարակի վրա։

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го мая 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.